ՍՈՒՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 5 Կ. — ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ — № 3

Հասցէն՝ Աստրախան, „ԲԱՆԲԵՐ“-ի խմբագրութիւն:
Հեռախօս № 182.

Астрахань,
Редакція «БАНБЕРЪ».

Astrakhan
Redaction „BANBER“.
Телефонъ 182.

ԲԱՆԲԵՐ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

№ 3 — ԱՍՏՐԱԽԱՆ, ԿԻՐԱԿԻ, ՅՈՒՆԻՍ 7. — 1915 Թ.

Խմբագրութեան պայմանները.
Մեր աշխատակիցներին և թղթակիցներին խնդրւում է—յօդւածները գրել պարզ, մաքուր և թղթի առաջին երեսի վրայ:
Խմբագրութիւնը իրեն է վերապահում ուղղագրութեան ձևը և փոփոխութիւնները բացի պայմանաւորւած յօդւածներից:
Վերադարձնւում են բանաստեղծականներն ու այն յօդւածները, որոնք երեք թերթից աւելի ծաւալ ունեն:
Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել 15 կ. փճար մարկաներով:
Բաժանորդները, թերթը չստանալու դէպքում, պարտաւոր են տեղեկացնել, հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն պատասխանատու չէ համարում:

Աստրախան 6 յունիսի

Ամէն մի պատերազմ, նոյն իսկ բարեյաջող, յաղթական վախճանով, իրա խոր, ծանր կնիքն է դնում ազգերի տնտեսական կեանքի վրայ: Առաւելապէս ծանր է այդ ազդեցութիւնը ներկայ համաեւրոպական վիթխարի պատերազմի ընթացքում, երբ ամենակուլտուրական և բարեկեցիկ համարւած ազգերը մարդկային անթիւ զոհերից բացի, ստիպւած են տեսնել նաև երկար տարիների ընթացքում ժողովրդի մթերած հարստութիւնը և նրան տնտեսական քայքայման ենթարկելը: Ռուսաստանը, ուր արդիւնաբերութեան շատ ճիւղերը դեռ սաղմային վիճակի մէջ են գտնւում, մինչև պատերազմը տնտեսական կախում ունէր հարևան երկրներից, իսկ պատերազմը [illegible] յետոյ, երբ փակւեցին ներմուծման ճանապարհները, և դժւարացան տնտեսական յարաբերութիւնները, երկիրը ստիպւած եղաւ իր ամբողջ յոյսը դնել ներքին արտադրութեան և արդիւնաբերութեան վրայ:

Երկրի քաղաքական արդի կացութիւնը և նրանից բղխած անխուսափելի հետևանքները, պահանջում են ժողովրդից անվերջ զոհողութիւններ, նամանաւանդ տնտեսական: Տիրող թանկութիւնը, գների անընդհատ աճումը, մթերքների սղութիւնը սպառնում են խապառ քայքայել ժողովրդի ստորին խաւերի տնտեսութիւնը:

Եւ տնտեսական տագնապի այդ ծանր օրերում, մարդկանց մի որոշ կատեգորիա՝ յանձին արդիւնաբերողների և վաճառականների, ոչինչ առաջ կանգ չի առնում ամենայայն չափերով օգտւելու հանգամանքից յօգուտ իրենց անյատակ գրպանների, փոյթ չէ նրանց համար, որ դա տեղի է ունենում ազգաբնակութեան ծայրահեղ շահագործման գնով:

Տօն է այդ կատեգորիայի մարդկանց փողոցում, նրանք ուրախ ուրախ շփում են իրենց ձեռքերը և աւելի ամուր սեղմում ժողովուրդը իրենց ճիրաններում:

Այդ շահագործմանը չափ սահման դնելու համար ժողովրդի կողմից գործ դրւած բոլոր միջոցները ոչ մի դրական հետևանքի չը հասցրին և ամենակուլ կապիտալը շարունակեց [illegible] իր յաղթական դերի մէջ:

Վերջերս Պետրոգրադում կայացաւ առևտրա-արդիւնաբերողների համագումարը: Պատերազմը սկսելուց 11 ամիս յետոյ ժողովրդի այդ խաւերի ցոյց տւած անթիւ զոհողութիւններից յետոյ, այժմ միայն մեր համառուսական Կիտ Կիտիչները որոշեցին դուրս գալ.... բարերարի դերում:

Համագումարը որոշել է օգնութեան գալ կառավարութեանը զօրքերի մատակարարութեան գործում: Կապիտալիստները նոյն իսկ բարեգործութիւնը անում են որոշ յետին նպատակներով, և ներկայ դէպքում կասկած չը կայ, որ նրանք իրենց «հայրենասիրական» այդ քայլի ծանրութեան մեծ մասը դարձեալ կը դնեն ժողովրդի ուսերին շարունակելով արհեստական կերպով բարձրացնել իրենց արտադրած ապրանքների գները:

Այդ պարոնները արդէն մի անգամ գեղեցիկ դաս ստացան Պետրոգրադի հիւանդանոցների մէկի կողմից, երբ վերադարձրեց մասգործներին նրանց տւած միանուագ և ամսական նպաստները, յայտնելով որ ինքը անհնարին է գտնում ընդունել դրամական նպաստ այն մարդկանցից, որոնք չեն քաշւում ամենաանպարկեշտ կերպով շահագործել ազգաբնակութիւնը մեր արհեստական թանկացումով:

Երևի դա քիչ էր և մեր կապիտալիստները սպասում են երկրորդ, աւելի համոզեցուցիչ դասի:

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

II

Ամերիկահայ գաղութի կեանքի բացառիկ և առանձնայատուկ երևոյթներից մէկն էլ այն է, որ ոչ մի հայաբնակ վայրում կուսակցական կեանքը, իրեն համար այնպիսի պարարտ հող չի գտել, ինչպէս ամերիկահայութեան մէջ: Անշուշտ վերագրել այդ հանգամանքը ամերիկական կեանքի տիրող պայմաններին և անմիջական ազդեցութեանը կը լինէր սխալ:

Ամերիկահայ գաղութը, որը ինչպէս ասացինք բաղկացած է մեծ մասամբ Տաճկահայաստանի խորքերից եկած բանւորներից, դժւար թէ կարողանար լայն չափով ընդօրինակել, կամ ընդգրկել ամերիկական կեանքի քաղաքա—տնտեսական կողմերը և տարւել այդ կեանքի մղիչ հոսանքներով: Ընդհակառակը, ամերիկահայը, չնչին բացառութեամբ, իրեն համար անմատչելի համարելով այդ ասպարէզը, և նամանաւանդ լաւ գիտակցելով, որ ինքը ժամանակաւորապէս է միայն գտնւում Ամերիկայում, ստիպւած է ամփոփւել բացառապէս յատուկ ազգային շրջանակի մէջ: Հեռու երկրում թողած հայրենի օջախը, կարիքի և զրկանքների մէջ թողւած հարազատների հոգսը, ստիպում են տարագիր հայ բանւորին, նոյնիսկ աշխատանքի ամենածանր բոպէներին իր հայեացքը յառել դէպի հեռուն, դէպի դժբաղդ հայրենիքը: Նա ապրում է իր հայրենիքի, իր հարազատների ցաւերով, այդտեղից ստացած խաբրիկներով: Հոգեկան այդ ապրումները և դրանից առաջացած ձգտումները—ահաւասիկ այն գլխաւոր ազդակները, որոնք ամերիկահային դիւրամատչելի նիւթ են դարձնում, հայրենիքի անունից խօսող, նրա ազատագրութեանը ձգտող հայ կուսակցութիւնների համար:

Ամերիկահայութեան մէջ ներկայումս գործում են գլխաւորապէս չորս կուսակցութիւններ՝ Սոց.-դեմ. Հնչակեաններ, Հ. Յ. Դաշնակցութիւն, Հայ Սահմանադիր ռամկավարներ և Վերակազմեալներ (Արգուեան խմբակ) իրենց սեփական պաշտօնական օրգաններով, բազմաթիւ մասնաճիւղերով, ակումբներով և գրադարան-ընթերցարաններով: Դեռ մի քանի տարի առաջ, մասամբ և այժմ, դժւար կը լինէր այդ կուսակցութիւնների գոր-

ծունէութեան, պրօպագանդայի մէջ փնտռել որոշ ուղղութիւն, քաղաքական դաւանանք, համոզում, սկզբունք։ Բոլոր կուսակցութիւնները հաւասար չափով պաշտպանում էին այն բոլորը ինչ որ հայկական էր, ազգային էր։ Շատ դժւար էր խոշոր տարբերութիւն գտնել այդ անուններով տարբեր, բայց իրօք միևնոյն շաւղով ընթացող կուսակցութիւնների մէջ։ Թէ իրենց թերթերում և թէ շարունակ անցք ունեցող բազմաթիւ հրապարակային ժողովներում, միշտ կրկնւում էր նոյն հին երգը. միևնոյն թեման— հայրենիքի դժբաղդ վիճակի, անխիղճ թիւրքի և քրդի վայրագութիւնների նկարագրութիւնները, մէջտեղ էին բերւում կուսակցական հերոսների և նրանց քաջագործութիւնների պատմութիւնները, անվերջ խաղում ժողովրդի զգացմունքների հետ և ՛ի վերջոյ իրենց, որպէս քաղաքական գործիչների, պարտականութիւնները անթերի կատարած լինելու յետկատար գիտակցութեամբ հանգանակութիւն էին բաց անում կուսակցութեան բազմապիսի ծախքերը ծածկելու համար և կոչ անում գալ համախմբւել իրենց դրօշակի շուրջը միահամուռ ոյժերով մղելու հայրենիքի ազատագրութեան գործը։

Մի քանի տարի առաջ ամերիկահայ թերթերը ազդւած ժամանակի պահանջներից փորձեցին մի քիչ աւելի սկզբունքային հողի վրայ կանգնել, սակայն առաջացաւ մի չը տեսնւած խառնաշփոթութիւն։ Յաճախ միևնոյն թերթում կարելի էր կողք կողքի տպագրւած տեսնել անարխիստականից սկսած մինչև նոյ պահպանողական-կղերական տենդենցներով գրւած յօդւածներ։ Նոյն բանին կարելի էր հանդիպել նաև հրապարակային ժողովներում, ուր միևնոյն կուսակցութեան անդամները պաշտպանում էին տրամագծօրէն իրար հակառակ տեսակէտեր։ Եւ ամերիկահայը, որի մէջ դժւար է գտնել անկուսակցական մէկին և որի մէջ նոյն իսկ չեզոք կուսւածները հրապարակ են գալիս որպէս կազմակերպւած մի հոսանք, չէր կարող կուսակցական նման «դաւանափոխութեան» ճանապարհով հասնել քաղաքական հասունութեան և գիտակցութեան։ Եւ այդ հանգամանքը այնքան ուժգնօրէն ազդել է ամերիկահայ անգիտակից մասսայի վրայ, որ շատերը առանց այլ և այլութեան պատրաստ են ամեն մի րոպէ յօրջորջւել սօցիալիստ, անարխիստ, ազատամիտ, պահպանողական և այլն նայած թէ ինչպէս կը հրահանգեն իրենց ղեկավարները, իսկ շատ ոմանց նաև ազգի շահերը։

Վերջին երկու տարւայ ընթացքում ամերիկահայ թերթերի մէջ բացառիկ տեղ է գրաւել «Երիտասարդ Հայաստան»ը, որը հետզհետէ դաւելով աշխատում է ընթանալ մարքսիստական ուղղութեամբ և աւելի յաճախ շօշափում սկզբունքային խնդիրներ և տալիս համապատասխան լուսաբանութիւններ ելակէտ ունենալով գիտական սօցիալիզմը, որի միակ արտայայտիչն է ամերիկահայ կեանքում։


Գաղափարական սկզբունքային հողի վրայ կանգնելու փորձեր է անում թէև անյաջող, նաև «Հայրենիք»ը, որը ամերիկահայ ամենահինը և անհամբերատար թերթն է. իսկ ինչ վերաբերում է միւս թերթերին՝ „Ազգ", «Ասպարէզ», „Պահակ" և այլն նրանք շարունակում են մնալ համոզումների հակասողութիւնների նախկին խառնաշփոթ վիճակի մէջ.

Այդ կուսակցութիւնների և նրանց բերանը եղող թերթերի փոխադարձ յարաբերութիւնները զուտ հայկական են, այսինքն նոյն բանակռիւների անվայել ձևը, հայհոյանքը, ցեխը, մութ ակնարկները, ինչ որ սովորական է հայ մամուլի որոշ մասում, բացառութեամբ մի երկու թերթերի։

Ռուս-տաճկական պատերազմը մեծ ցնցում առաջ բերեց նաև Ամերիկահայ շրջանակում։ Այդտեղ ևս շտապեցին արձագանք տալ հայ ժողովրդի մէջ տիրող ընդհանուր տրամադրութեանը։ Հանդէս եկան կուսակցութիւնները, ազգային զանազան հիմնարկութիւնները, կամաւորների խմբերը իրենց կոչերով և յայտարարութիւններով։ Ոգևորութեան այդ րոպէներին միտք յղացւեց ի մի համախմբել բոլոր կուսակցութիւնները, հիմնարկութիւնները և համերաշխութեամբ ընդհանուր ոյժերով առաջ տանել գործը, ինչպէս նաև բացել ընդհանուր հանգանակութիւն և հաւաքւած դրամները գործադրել տաճկահայ ժողովրդի պաշտպանութեան գործի վրայ, հաւասարապէս օգնելով բոլոր կռւող խմբերին։

Բայց դարձեալ խօսեց կուսակցական նեղ հաշիւները, կիրքը, եսը և հազիւ կայացած համաձայնութիւնը, հէնց սկզբից քանդւեց և առաջ բերեց երկու հակառակորդ, իրար խանգարող բանակներ։ Դա սովորական երևոյթ է հայկական կեանքում և ամերիկահայը չշեղւեց այդ կողմից բացառութիւն կազմել։

Վ. ՄԱՐՍԵԱՆ



ՄՈՍԿՎԱՅԻ ԴԷՊՔԵՐԸ

(Համաձայն կառավարչական հաղորդագրութեան)

Մայիս 28-ին Մոսկվայում կատարւած դէպքերը, անսպասելի կերպով եկան խանգարելու երկու միլիոնանոց ազգաբնակութեան խաղաղ աշխատաւոր կեանքը։

Սկսեց մեզ հետ պատերազմող պետութիւնների հպատակներին պատկանող խանութների աւերածութիւնը։

Այդ դէպքերին կանխել էին լուրեր այն մասին, որ Ռուսաստանում ապրող գերմանացիները ամեն կերպ օգնում են իրենց հայրենակիցներին պատերազմելու մեր դէմ և այդ նպատակով աշխատում են, որքան հնարաւոր է մեծ չափով վնասելու ռուս ազգաբնակութեանը։

Այդ լուրերը աւելի ևս ուժեղացան վերջին օրերը, երբ մի քանի գործարաններում պատահեցին, սուր—ստամոքսային հիւանդութիւններ, որոնք մի քանի դէպքերում կրում էին ծանր բնաւորութիւն։ Բանւորական շրջանակներում սկսեցին խօսել, որ գերմանացիները թունաւորում են ջուրը։

Այն գործարաններում, ուր տեղի ունեցան հիւանդանալու դէպքեր, բանւորները պահանջեցին իշխանութիւնից գերմանացիների հեռացումը։ Այդ պահանջը չը բաւարարւեց, որովհետև գործարանների վարչութիւնները գտան անհիմն.

Այդ հողի վրայ մայիսի 27-ին երեկոյեան Ցինդելի և Շրադերի գործարաններում ծագեցին անկարգութիւններ, որոնք արտայայտւեցին նրանով, որ աւերածութեան ենթարկեցին գերմանացի բարձր ծառայողների բնակարանները և բռնութիւն գործ դրեցին այդ բնակարանների տէրերի դէմ.

Այդ անկարգութիւնները ծառայեցին, որպէս ազդանշան մայիս 28-ին պատահած դէպքերին.

Մայիս 28-ին առաւօտեան, ժամը 10-ի մօտերքը, Բօգօլիւբեան դարպասների մօտ երևաց աշխատաւորների մի ամբոխ։ Ճակատով այդ ամբոխի մէջ պարզւեցին ռուսական ազգային դրօշակներ։ Ամբոխի մէջ գտնւողներից մէկը բռնած ունէր թագաւոր կայսրի պատկերը։ Սկսեց Боже царя храни օրհներգը։ Բազմութիւնը գնալով սկսեց ստւարանալ։ Ամբոխի մի մասը դիմեց դէպի Верхніе ряды և ամենից առաջ ջարդեց և ոչնչացրեց Էյնեմի և Ցինդելի խանութները։ Ամբոխը բաւականանում էր միայն ապրանքները փողոց թափելով և ոչնչացնելով, առանց որ և է բան վերցնելու, իսկ նրանցից, որոնք փորձում էին վերցնել, յետ էր խլւում և ոչնչացւում։ Դէպքի լուրը շուտով տարածւեց ամբողջ քաղաքում և ամբոխը հետզհետէ մեծանալով հսկայ ծաւալ ստացաւ։

Յանկարծակիի եկած ոստիկանութիւնը յանպատրաստից անզօր էր որ և է բան անել բազմահազարեան ամբոխի հետ, որը վերջացնելով Китай-городъ'ում եղած գերմանական խանութների աւերման գործը, մի մասը անցաւ Лубянская площадь, իսկ միւս մասը Петровка և Кузнецкій мостъ։ Դէպքերը միաժամանակ տեղի էին ունենում մի քանի կէտերում։

Սկզբում ջարդարարները ենթարկւում էին իրենց առաջնորդողների կարգադրութիւններին, և զգուշութեամբ էին վերաբերւում դէպի ոչ գերմանական կամ աւստրիական խանութները, սակայն յետագայում, երբ որ ամբոխի թիւը հսկայ չափերի հասաւ և նա բաժանւեց մի քանի մասերի, ղեկավարները կորցրին ամեն մի իշխանութիւն ամբոխի վրայ։ Դրան առանձնապէս նպաստեց ամբոխի մէջ հարբածների երևալը, որոնք խմիչք էին ձեռք բերել թալանած խմիչքների պահեստներում։ Սկսեց յարձակման ենթարկւած խանութների թալանը։ Ի վերջոյ ամբոխը դադարեց հաշւի առնել թէ ում է պատկանում թալանւող խանութը։ Անկարգութիւնները ծայրահեղութեան հասան ուշ գիշերին։ Քաղաքի մի քանի տեղերում սկսւեցին հրդեհներ։ Հրդեհւում էին թալանւած խանութները։ Հրդեհաշէջները չէին կարողանում հասնել հանգցնելու։

Առաւօտեան 3 ժամին անկարգութիւնները սկսեցին թուլանալ, իսկ ժամը 5-ին բոլորովին դադարեցին։

Պօգրօմների սկզբում մասնակցում էին բանւորները, բայց երբ ամբոխը սկսեց թալանել և աւելի սանձարձակ դառնալ, նրանք դադարեցին մասնակցելուց և ցրւեցին տները։

Մայիսի 29-ի առաւօտեան ամբոխը նորից փորձեց հաւաքւել և վերսկսել թալանը, սակայն ոստիկանութիւնը և զօրքը թոյլ չըտւին և ցրեցին նրան։



ԸՆԿԱԾՆԵՐԻՆ *)

Յարգանք ձեզ ընկած սուրբ մարտիրոսներ.
Դուք մեռաք ազատ, որպէս հերոսներ.
Կարմիր Բօրենուն ուղեցիք սանձել,
Մեռանող երկրին նոր կեանք ներշնչել։
Բայց դեռ կանգուն է թիւրքի այդ բահը.
Լափում է անյագ հայ կեանքեր մասսաղ։
Դեռ բարձրանում են սև կախաղաններ.
Դեռ շառաչում են մաշող շղթաներ.
Որպէս գերեզման՝ բացած բերաններ.
Զոհ են սպասում դաժան մութ բանտեր։
Եւ դեռ արշալոյս ծագում է երկչոտ՝
Հարազատների արիւնի միջից,
Դեռ բիւր զոհերի մրմուռը ցաւոտ
Վրէժ է կոչում տանջարաններից։
Արիւնի հեղեր, արիւնոտ ձեռքեր—
Կազմում են զարդը թիւրք պալատների,
Նոր ձայն, նոր շշուկ խեղդում են, զսպում
Թիւրք նշանազարդ գահերն արի։
Յօշոտւած գիրք, ջախջախւած գանգեր—
Միակ միջոցը ապահովութեան,
Եաթաղան, գնդակ—միակ ապաւէն
Արիւնոտ գահի գազան բռնութեան....
Փոյթ չէ, ընկածներ, չենք լռի երբէք,
Կզոհենք մեր կեանք ձեզ պէս անխնայ։
Ամբոխը զարթեց—մեծ համրը խօսեց.
Մահ և սարսափից էլ չենք վախենայ։

Գ. ք. ՄԻՐՏՈՒՄԵԱՆՑ

*) Տպւած «Մշակ»ում

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԳԷՈՐԳ ՔԱՀԱՆԱՅ ՄԿՐՏՈՒՄԵԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ.

(Աստրախանից—Բաքու)

Ինչպէս յայտնի է Աստրախանի նահանգական կոմիտէն Կովկասի փախստականներին առանց ազգերի խտրութեան իրեր բաժանելու համար ընտրել էր հանգուցեալ Գէորգ քահ. Մկրտումեանին իր լիազօր ներկայացուցիչը. Աստրախանից 2 վագոն (221 արկղ) իրեր տանելու Ղարս և բաժանելու գաղթականների մէջ. ուղարկւած իրերն էին զանազան տեսակ հագուստներ, ձուկ-մայասալ, սապոն, թէյ, շաքար, ալիւր, աղ, սելյօդկա, [illegible] չոր միրգ, սանր, թել, ասեղ և այլն։ Ճանապարհ- «Մերկուրի» ընկերութեան շոգենաւը, բառնելով այդ բոլորը հանգուցեալը ապրիլի 5-ին երեկոյեան 9 ժամին, „Կառուֆման" շոգենաւով հեռացաւ Աստրախանից չափազանց ուրախ, չափազանց ոգևորւած, որ իրան ևս վիճակւեց իր դժբախտացած եղբայրներին օգնութեան հասնել, որ կչտապի թերևս մի քանիսի արցունքը կ՚սրբէ, կ՚ամոքէ նրանց վիշտը, կխրախուսէ, հաւատ կներշնչէ դէպի լուսաւոր, ազատ ապագան և որքան էլ դժւար լինի այդ իր ճանապարհորդութիւնը՝ կյաղթի բոլոր խոչընդոտներին և հանգիստ կը վերադառնայ Աստրախան այդ ծանր օրերի մեծ գործում իր փոքրիկ աշխատանքը ևս մատուցած լինելով։

Յիշում եմ նրա վերջին խօսքերը նաւահանգստում.—„ես էլ եմ գնում. գիտեմ ծանր գործ եմ յանձնառել, իմ

ընտրութեամբ ես չեմ կարող գնալ մի տեղ, յանձնել իրերը և ասել—դէ առացէք. տուէք ստացագիր, բաժանէք ամենքին, և վերջացաւ, ոչ, մինչև անձամբ չ'քննեմ կարիքի չափը, մինչև լաւ չհամոզուեմ խաժներիս մէջ, մինչև իմ ձեռքով չբաժանեմ ամենքին և չհասկացնեմ նրանց այդ օրերի մեծ նշանակութիւնը՝ չեմ հանգստանալ, իսկ այդ ամենը յոգնեցնելու է, յուզելու է ինձ, բայց ոչինչ, չեմ փոշմանում, այդ մեծ օրերի սուրբ գործը կանչում է ինձ, գնում եմ ամենայն սիրով, յուսով եմ կբաժանեմ ամեն ինչ իմ ձեռքով և կվերադառնամ զեկուցանելու աշխատանքներիս մասին, անշուշտ կարիքը մեծ է, գուցէ էլի իրեր ուղարկելու լինեն, թող չկասկածեն և վստահ լինեն, որ ամեն ինչ հարազատութեամբ տեղ է հասնում և կարիքը ծածկում, թող հաստատ հաւատ ունենան դէպի գործը":

Եւ գնաց, անչափ յափշտակուած այդ գործով, անչափ սիրելով այդ գործը: Գնաց—որ այլևս չվերադառնայ. գնաց, կատարեց իր պարտքը ամենայն ճշտութեամբ և հարազատութեամբ, բայց աւաղ, իր կեանքի գնով, իր ընկերի սիրուն՝ իր կեանքը զոհելով:

Այժմ անցնում եմ նրա ճանապարհորդութեանը, թերթելով նրա յիշատակարանը: Այնքան նրա երեւակայութիւնը վառ էր և դիտողութիւնը սուր որ, ոչ մի բան չէր կարող վրիպել իր ուշադրութիւնից: Աստրախանից մինչև Բաքու անցել է շոգենաւով, թւում է թէ ինչ կարող էր մի առանձին նշանակութիւն ունենալ այդ կտոր տեղում—ջուր, ծով, երկինք: Բայց իր յիշատակարանում բերան յատուկ մանր տառերով գրած ունի մէկ ու կէս երես, թէ ովքեր էին իր ուղեկիցները—երկու Աստրախանցի հայ վաճառականներ և երկու ռուս, թէ ինչ են խօսել հայ եկեղեցու և հայ գրականութեան մասին: Թէ որքան գրաւիչ է արևի ծագելը և մայր մտնելը ջրի երեսին: Արևածագի հրաշալի տեսքը Ապշերոնում Սուրբ (СВЯТОЙ) կղզին իր նաւթահորերով: Նարգեն անմարդաբնակ կղզին, որը ներկայումս, գրում է, բնակեցրած է տաճկական գերիներով մօտ 3000 մարդ. մտադրութիւն կայ բնակեցնել 30000 հոգի, որանց համար շինուած են կղզում բարաքներ: «Այնուհետև երևաց Միգուլեսկի գործարանը (ներկայումս անգործ), Թագիևի մանուֆակտուրի ահագին գործարանը, որ այժմ զբաղուած է միայն վիրակապեր պատրաստելով: Սև քաղաքը, իր բարձր շինութիւններով, Բիբիհեյբաթի անտառանման նաւթէ բուրգերը, Բայլովը և այլն: Ինձ յաջողեց «Մերկուրիյ»-ի կառավարչից խնդրել որ բերած իրերս ապրանքատար կայարանից տանեն երկաթուղու կայարանը, որպէսզի հեշտ լինի վագոնները բարձել»:

Անպայման այդքան մանրակրկիտ հետազոտող մարդը չէր կարող հանգիստ օրեր անց կացնել և ինչպես կտեսնենք յետոյ, նա Բաքւի արևի տակ ամբողջ օրեր է անցկացրել ապրանքները իր աչքի առաջ վագոններ բարձելիս, երբ ստացել է անագին դժւարութիւններից յետ վագոնները.

Բաքու հասնելուն պէս գնում է Հայոց եկեղեցի: Բակում պատահում է ծանօթների և ընկերների և որոնց յայտնում են թէ թեմի Առաջնորդ Կարապետ եպիսկոպոսը այդտեղ է և առաջնորդարանում՝ ներկայանում է եպիսկոպոսին: Կարապետ Սրբազանը լաւ ընդունում է նրան, խօսում է հետը, լսում նրա ճանապարհորդութեան և գործի մասին, իջևանելու տեղ է տալիս առաջնորդարանի սենեակներից մէկում և հրաւիրում է նախաճաշելու, որից հրաժարւում է հանգուցեալը, իր շտապողական գործերի պատճառով և վերադառնում է միայն երեկոյեան, ուր նկատում է, սենեակում գրուած է արդէն մահճակալ, սեղան և այլն:

„Սրբազանը ինքը անձամբ եկաւ, տեղեկացաւ յարմարութիւններիս մասին և առաջարկեց, որ ինչ պակասութիւն զգամ, պահանջեմ և թէյը առաջնորդարանում խմեմ":

(Կ՚շարունակուի).

Դ. Ք. ՔԱՐՏԱՇԵԱՆՑ



ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Գէորգ Ք. Մկրտումեանի յիշատակի յաւերժացումը.

Անցեալ կիւրակի, մայիսի 31-ի ծխական ժողովը՝ ներկայութեամբ մօտ 35 ծխականների (ոչ սակաւ թիւ ժամանակին նայած), նախագահութեամբ Ռ. Աստուածատրեանի և քարտուղարութեամբ հայր Բարտաշեանի՝ ձայների ճնշող մեծամասնութեամբ որոշեց զբաղուել հանգուցեալ Գ. Ք. Մկրտումեանի յիշատակը յաւերժացնելու հարցով:

Նախագահի հրաւիրանօք ժողովը նախ յոտնկայս յարգեց հանգուցեալի յիշատակը. ապա թաղման մանաժողովի ներկայացուցիչ Տէր-Զաքարեանը ծանօթացրեց ժողովին գրուած հարցի ծագման և ընթացքի հետ՝ կարդալով նոյն մանաժողովի նիստերի արձանագրութիւնները:

Մայիսի 12-ին մի խումբ յարգողներ հաւաքուելով խորհրդակցութեան՝ թէ ինչ ձևով յարգեն Ալէքսանդրոպոլում վախճանուած Գ. Ք. Մկրտումեանի յիշատակը, որոշեցին բերել տալ հանգուցեալի դիակը Աստրախան՝ թաղելու, թէ այրին կը տայ իւր համաձայնութիւնը, փոխադրել հետագրով վեց հարիւր ռուբլի ճանապարհածախսի համար, խնդրել թեմիս առաջնորդին նշանակել արտակարգ ծխական ժողով հենց առաջի կիւրակին, դնել այդ ժողովի տրամադրութեան տակ հանգուցեալի յիշատակը յաւերժացնելու ձևի որոշումը: Այդ բոլորն 'ի կատար ածելու համար ընտրեց մանաժողով՝ բաղկացած հետեւեալ անձնաւորութիւններից՝ տ. Ս. Մելիքենցեան. պ.պ. Գ. Բորոդինեանց, Ց. Ստեփանեանց, Լ. Մամաջանեան, Ռ. Աստուածատրեան, Ա. Զօհրաբեան, Վ. Ղուկասեան, Ա. Մելքիսեդէկեան և Դ. Տէր-Զաքարեանց:

Որոշուած կիւրակէին ծխական ժողով բանալու թոյլտուութիւն չստացուեց թեմիս առաջնորդից, այսուամենայնիւ հոգեհանգստից յետոյ մասնաւոր ժողով կայացաւ եկեղեցու խցում մօտ յիսուն հոգու ներկայութեամբ, որը լսելով համառօտ զեկուցում մանաժողովի գործունէութեան մասին՝ տուեց իւր համաձայնութիւնը և լիազօրեց նորից պաշտօնապէս դիմել թեմիս առաջնորդին՝ արտակարգ ծխական ժողով հրաւիրելու նոյն հարցի համար, այլև ներկայացնել ընդհանուր ժողովին մշակուած ծրագիր:

Մանաժողովը առաջարկում է ժողովին հետեւեալ ծրագիրը 'ի քննութիւն.

ա) Վերցնել իւր վրայ հանգուցեալի դիակի տեղափոխութեան և թաղման ծախքերը—մօտ ութ հարիւր ռուբլի:

բ) Հաստատել ստիպենդիա հանգուցեալի անուան, Աստրախանի միջնակարգ դպրոցներից մէկում:

գ) Յատկացնել նիւթական նպաստ հանգուցեալի ընտանիքին մէկ կամ երկու տարի:

դ) Բանալ վերոյիշեալ նպատակների համար հանգանակութիւն:

Ձայների ճնշող մեծամասնութեամբ, ընդդէմ երկուսի, ժողովը սկզբունքով ընդունեց հանգուցեալի յիշատակը յաւերժացնելու այս կամ այն ձևը:

Ծրագրի առաջին հարցի քննութեան ժամանակ պ. Յուլաֆեանը առաջարկում է թաղման ծախքերը հոգալ մանաժողովի անձնական միջոցներից:

Լ. Մամաջանեան.—Մանաժողովը դեռ գրամը փոխադրելու միջոցին 'ի նկատի ունէր, որ եթէ ընդհ. ժողովը կը մերժի իւր վրայ վերցնելու այդ ծախքերը, անշուշտ մանաժողովը պատիւ կը համարի յանձն առնել: Բայց այստեղ սկզբունքի խնդիր կայ. հասարակութիւնը իւր վրայ վերցնելով վերոյիշեալ ծախքերը, դրանով իւր յարգանքն է արտայայտում հասարակական գործչին, նրա թաղմանը հասարակական բնաւորութիւն տալով, ինչպէս որ ընդունուած է աւելի կուլտուրական ազգերում:

Ժողովը ձայների ճնշող մեծամասնութեամբ ընդունեց այս առաջարկը:

Երկրորդ հարցի քննութեան ժամանակ պ. Յուլաֆեանը դարձեալ օպպոզիցիա արեց՝ իւր ընդդէմ լինելը պատճառաբանելով նրանով, որ մինչև օրս Աստրախանում եղել են դէպքեր, երբ այդ տեսակ ֆոնդերի հիմք դրել են, բայց մինչ էլ անկատար են թողել, ինչպէս Ալաջալեանի, Սօրոյեանի, Ստեփանէի և այլոց անուան ֆոնդերը...:

Այս կարծիքին ընդդէմ պ. Մամաջանեանը մատնանիշ արեց այն ջերմ վերաբերմունքը, որ հասարակութիւնը ցոյց տուեց դէպի հանգուցեալի յիշատակը, նրա թաղմանը ահագին բազ-

ՖԵԼԻԵՏՈՆ

ՑԵՐՏԵՐՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Նարժ.

I

Պ. Խմբապետեանը խոնր գլուխ տալով մօտեցաւ իւր ծխատէր քահանային և ուղղահայեացքի նման ձեռքուելով, մերկացրեց գլուխը և սկսեց հառաչել:

— Տէր հայր, մամաս մեռաւ. հարկաւոր է թաղել...

— Օրհնեալ լինիս զաւակս և յիշեալ առաջի պատարագի—առաց քահանան կոկորդը մաքրելով և միրուքը ուղղելով. Է... ինչ կարգով ես ցանկանում թաղել: Խմբապետեանը տարակուսելով թեւերը թօթափեց:

— Պարզ բան է—պատասխանեց նա—քրիստոնեական կարգով.

— Հա, հա, հա,—խնդաց քահանան Խմբապետեանի միամտութեան վրայ. Ի հարկէ քրիստոնէական կարգով կ'թաղես, բաս հօ դալմուղների կարգով չես թաղելու: Ես գիտեմ, որ դու քրիստոնեայ ես, քո ազգանունդ գրուած է իմ մատեանում. քո մաման էլ քրիստոնեայ էր, նրա ազգանունն էլ գրուած է իմ մատեանում. ողորմած հոգին տարեկան մի յիսուն անգամ եկեղեցի կ'գար, [illegible] կ'տար, մոմ կ'վառէր. մի հ[illegible] էլ ես կ'գայի ձեր տանը ժամոցի, աղօթքների, անուանակոչութեան և մասամբ նորինի փառս հայոց ազգիս...

— Շատ շնորհակալ եմ ձեր յիշողութեան և ձեր ուշադրութեան համար, ընդհատեց քահանային Խմբապետեանը:

— Հապա էլ ինչու էք հարցնում կարգի մասին:

— Հայ քրիստոնեայ մարդ ես, նեղացաւ քահանան, բայց եկեղեցու կարգ ու կանոնը չը գիտես: Երբ հարցնում եմ կարգի մասին, ես ուզում եմ գիտենալ թէ որքան փող ես մտադիր ծախսել...

Եւ քահանան բացատրեց.

Յուղարկաւորութեան համար հազար ու մի տեսակ կարգ ու կանոն կայ... օրինակ եթէ ցանկանում ես, կարող ես թաղման հանդէսը խմբով կատարել, բայց եթէ փող չունես կարող ես և առանց խմբի. կարող ես մեծ զանգով կատարել, բայց եթէ փողը խնայում ես կարող ես և փոքր զանգով բաւականանալ, կարող ես եթէ ծախսերից չես վախենում մեռելը տանել եկեղեցի, իսկ եթէ ժլատ ես կարող ես ուղղակի գերեզմանատուն ուղարկել... եթէ բաւականին փող ունես կարող ես մինչև անգամ թաղմանը սրբազանին կանչել, իսկ եթէ փող չունես պէտք է բաւականանաս միմիայն երկու քահանայով...

— Մէկ քահանայ է ինձ հարկաւոր, հառաչեց Խմբապետեանը, միմիայն մէկ քահանայ:

— Այն ժամանակ, զաւակս, հանգուցեալին չի կարելի եկեղեցի տանել:

Ի՞նչպէս թէ չի կարելի. ով կարող է ինձ արգելել:

— Հերթական քահանան.

— Հերթական քահանան.

— Այո, հերթական քահանան:

— Իսկ հերթական քահանան քրիստոնեայ է թէ ոչ:

— Ի հարկէ քրիստոնեայ է, ամենախեղական հայ քրիստոնեայ...

— Ապա ինչու է նա ցանկանում զրկել մեռելիս եկեղեցու պատարագից:

— Որովհետև համաձայն մեր ներքին պայմանագրի այս շաբաթ պատարագ անելու հերթը նրան է պատկանում և բացի նրանից ոչ ոք չի կարող պատարագ մատուցանել... բացատրեց ծխատէր քահանան:

—Դէ որ այդպէս է թող նա թաղի մամաս, ինձ համար միևնոյն է:

— Այն ժամանակ ես համաձայն չեմ, տաքացաւ ծխատէր քահանան. էլ ինչ քո տանու քահանան եմ, որ թաղման ծիսակատարութեան էլ չ'մասնակցեմ, ես տարիներով սպասում եմ, երբ պէտքէ ծխականներից մէկը, կամ մեռնի, կամ ամուսնանայ և կամ երեխայ մկրտի, իսկ դու ուզում ես զրկել ինձ եկամուտից:

— Ո՛չ, քաւ լիցի. սկսեց արդարանալ Խմբապետեանը, դէ՝ դուք արէք պատարագը:

— Չի կարելի, հերթը ուրիշինն է.

— Դէ թող նա էլ թաղի:

— Չի կարելի, ծխատէր քահանան ես եմ. օրէնքը այդպէս է.

— Ի՞նչ օրէնք:

— Քաղաքիս եկեղեցիների օրէնքը, համաձայն քահանաների ներքին պայմանագրի...

— Իսկ քրիստոնէական եկեղեցու օրէնքը, հետաքրքրուեց Խմբապետեանը.

— Այդ մասին ես չեմ ցանկանում խօսել, ընդհատեց քահանան:

— Ինչու.

— Դա արտաքին քրիստոնէական հարց է իսկ մենք խօսում ենք ներքին պայմանագրի մասին:

— Ես կ'բողոքեմ ձեր ներքին պայմանագրերը, բարկացաւ Խմբապետեանը —որ խեղճ մեռելը առանց ժամ ու պատարագի չ'մնայ.

— Իսկ մենք քեզ խելագար և յեղափոխական կ'յայտարարենք, սպառնաց քահանան:

— Ես առաջնորդին կ'գանգատուեմ.

— Թէկուզ կաթողիկոսին գանգատուիր—հեգնեց քահանան և նորից մաքրեց կոկորդը:

(Կ՚շարունակուի)

MERR-LO.

մութեամբ ներկայ գտնուելով և սրտանց ողջունելով. ուստի անկասկած այս գեղջում յաջողութիւնը ապահովուած է, եթէ միայն գործի գլուխ անցնողները եռանդով շարժուեն։

Եղան ուրիշ առաջարկութիւններ ևս։

պ. Նախագահը աւելի յարմար է գտնում հիմնել գրական ֆոնդ հանգուցեալի անուանը՝ լաւագոյն հայ հեղինակներին մրցանակատրելու։

պ. Զաւէն առաջարկում է մահարձան դնել։

պ. Վախտանգեանց գտնում է անհրաժեշտ՝ տպագրել հանգուցեալի գրուածքները։

Այս վերջին առաջարկութիւնը ծրագրից հանուեց, որովհետև Տէր-Զաքարեանցը յօժարութիւն է յայտնում իր վրայ վերցնել հրատարակութեան ծախքերը։ Մահարձանի հարցը նոյնպէս հանուեց։

Քուէարկուեցին ստիպենդիայի և գրական ֆոնդի առաջարկութիւնները՝ առաջինը ձայների մեծամասնութեամբ ընդունուեց. բայց ժողովը երկրորդի համար որոշեց՝ եթէ ժողոված դրամը բաւարարութիւն տալով առաջին երկու յօդուածներին, աւելորդ գումար կը մնայ, ընթացք տալ և գրական ֆոնդի խնդրին։

Ծրագրի երրորդ հարցը՝ ժողովը համարելով մասնաւոր և ոչ հասարակական բնաւորութիւն ունեցող խնդիր՝ չընդունեց. միայն մի կէտի վրայ դարձնելով ուշադրութիւն. այն է տնտեսական հարցը։ Որովհետև հանգուցեալը այս տարի տնտեսական հերթ էր առացել, որոշեց դիմել թեմիս առաջնորդին և խնդրել, որ այդ հերթը՝ եթէ կարելի է, թողնի հանգուցեալին պարտաւորեցնելով նրա փոխարէն նշանակած քահանային տնտեսական եկեղեցու հասոյթը՝ բացառեալ ծախսերը՝ յատկացնել նրա ընտանիքին։ Այս նպատակով ընտրուեցին պ.պ. Աստուածատրեան և Մամաջանեան։

Այս հարցի քննութեան ժամանակ ևս պ. Թալաֆեան փորձեց ժողովի սահուն ընթացքը վրդովել անտեղի առաջարկութիւններով, որ տեղիք տուեց պ. Մամաջանեանցին արդարացի կերպով նկատել, որ եթէ հայ հասարակութիւնը իմանար թէ այս ժողովում փորձեր են լինելու հանգուցեալի յիշատակի վրայ սուտ ձգելու, անպատճառ կը գար աւելի մեծ բազմութեամբ, որպէս զի իր բարոյական ոյժով ճնշի այդպիսի փորձերը։

Ժողովի վերջում կատարուեց գործադիր մասնաժողովի ընտրութիւն։ Վերընտրուեց թողման մասնաժողովը ամբողջ կազմով, աւելացնելով երկու հոգի ևս՝ Գալուստ քահանայ Քարտաշեան և Ս. Ֆրանգուլեանց։

ՄԵՐՈՒԱՄԳՈՒՄ

ԼՈՒՐԵՐ

◆ Ղազանի շրջանային հողաբարձուէն հաստատուել է Աստրախանի գաւառի հողաբարձուների պաշտօնում պ.պ. Ա. Ալոյեանին, Ռ. Բուխարգեանին, Ց. Դրանիշչիկեանին, Բայեանին և Թալաֆեանին։

◆ Այսօր յունիսի 7-ին թեմական դպրոցի դահլիճում կայանալու է ծխական ժողովը, որը պիտի կրկին զբաղուի հողաբաժանութեան խնդրով։

◆ Քաղաքումս եղած պարսկահպատակ վաճառականները տեղեկութիւն են ստացել, որ Ուրմիում (Պարսկաստան) իրենց խանութները և ապրանքները թալանել են։ Քաղաքը շրջապատուած է ռուս զօրքերով, որոնք տեղացի պարսիկների մօտ փնտռում են թալանուած ապրանքները։

◆ Երեկորեայ ժողովարարութիւնը յօգուտ ծայրագաւառների փախստական ազգաբնակութեան տուել է մօտ 15000 րուբլի արդիւնք։

◆ Պետական դումայի անդամ պ. Սարգիս Ֆրանգուլեանը մեկնեց Պետրոգրադ։

◆ Նահանգապետի տանը սկսուած են աշխատանքներ, գերմանացիների գործածած թունաւոր գազերի դէմ պաշտպանող դիմակալներ պատրաստելու համար։ Բոլոր ցանկացողները հրաւիրւում են աշխատելու։

◆ Մայիս 31-ին 4-րդ քաղաքամասում ձերբակալուած են 10 հոգի գերմանացիներ գաղտնի ժողովի ժամանակ։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Յունիս 15—17-ը Սամարայում կայանալու է քաղաքների ներկայացուցիչների համագումար, որը պիտի զբաղուի կենտական մթերքների թանգութեան դէմ մաքառելու խնդրով։

ԱՍՏՐԱԽԱՆԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԳԵՑԻԿ ԽՈՒՄԲԸ.

I

Տեղումս գոյութիւն ունի երգեցիկ խումբ, որը երկու մասի բաժանուելով երգում է կիրակիները երկու եկեղեցիներում պատարագի ժամանակ։

Խմբի ղեկավարն է պ. Մեղնիկեան, իր օգնական՝ պ. Կորճէնեանի հետ։

Մասնակցում են՝ երեխաներ, օրիորդներ և մեծ տղաներ, որոնց թիւը խմբի մէջ կարելի է հաշուել մօտաւորապէս 40—45 անձն։

Եկեղեցիներից խումբն ստանում է վարձատրութիւն 3000 րուբլի։

Պատարագի արարողութեան ժամանակ խումբը երգում է մէջ ընդ մէջ՝ եռաձայն, քառաձայն և երբեմն իսկ ունիսոն (միաձայն)։

Թէև ներկայումս հրապարակի վրայ են դրուած շատ աւելի հրատապ ու կարևոր խնդիրներ, սակայն աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ տեղիս ծխական ժողովի օրակարգի մէջ արդէն դրուած է երգեցիկ խմբի հարցը, ուստի կարևոր ենք համարում հասարակութեան մասամբ ծանօթացնել քննելիք խնդրի հետ, համառօտ հայեացք ձգելով խմբի երգեցողութեան վերայ, առանց մտնելու աւելի մանրամասնութիւնների մէջ։

Երգեցողութեան նիւթը վերցրած է հայոց յայտնի երաժշտագէտներ՝ Թաշճեանի, Կարա-Մուրզայի և միակ կոմպոզիտոր՝ Եկմալեանի պարտիտուրաներից. սակայն, ինչպէս երևում է՝ խմբի ղեկավարը՝ կամ յիշեալ անձանց և ոչ մէկի հեղինակութեան գերակշռութիւն չտալով համարձակուել է նրանց մշակութեան մէջ քմահաճ, անճաշակ փոփոխութիւններ մտցնել և կամ, անկարող լինելով մասնաւոր ճշտութեամբ իւրացնել յիշեալ պարտիտուրաները՝ եղանակները այնքան խճողել է, որ դժուարանում ես որոշել թէ, իսկապէս, ում մշակութիւնն է։

Երգեցողութեան ընթացքում պակաս չեն պատահում նաև սեփական թխած եղանակներ, ինչպէս՝ «Միայն Սուրբը»... և մշակութիւններ՝ „Տէր-ողորմեաներ"-ը, „Օրհնեա Տէր"-երը, որոնք ամբողջովին լցուած են ռուսական հոգով զուրկ են հայկականից։

Հայոց եկեղեցին այն գեղարուեստի տաճարը չէ, ուր ամեն մի անհատ կարողանայ, ըստ իւր հաճութեան նորութիւններ մտցնել։

Անմահ Եկմալեանի պարտիտուրան նախ՝ քննութեան է ենթարկել Պետրոգրադի կոնսերւատորիայի, կայսերական կապելլայի կողմից, և ապա միայն, այդ հիմնարկութիւններից ստացուած գովասանական վկայագրերի վրայ հիմնուելով երջանկայիշատակ Խրիմեան Հայրիկը առանձին կոնդակով թոյլատրում է եկեղեցի մտցնել։

Ահա այն ճանապարհը, որով պէտք է ընթանար և Աստրախանի հայոց երգեցիկ խմբի ղեկավարը, երբ կամենում էր սեպհական կամ անյայտ հեղինակների մշակած եղանակները եկեղեցում երգել։

Հայ իրականութեան մէջ գոյութիւն ունեն յայտնի երաժշտագէտներ, որոնք ունեն իրենց հեղինակած երգերն ու մշակած բազմաթիւ եղանակները, սակայն իրենք իրաւունք չեն համարում մի քայլ անգամ շեղուել պատարագի երգեցողութեան մէջ, Եկմալեանի պարտիտուրայից, որի մի քանի կտորները վերջերս մեծ յաջողութեամբ երգուել են Թիֆլիսում լարային (սիմֆոնիկ) օրկեստրի նուագածութեամբ, յօգուտ գաղթականների կազմակերպուած համերգին։

Այսպէս՝ Պետրոգրադի, Մոսկուայի, Թիֆլիսի, Բագւի եկեղեցիներում մեր ամենայայտնի խմբապետները մի միայն աշխատանք են թափում, որ Եկմալեանի մշակած եղանակները կարելին չափ հարազատութեամբ երգուած լինեն, և ոչ թէ նոցա մէջ փոփոխութիւններ մտցնեն։

Մ. ԱՍԼԱՄԱԶԵԱՆ



ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎՈԼԳԱՅԻ ԱՓԵՐԻՑ

II.

Ցերեկուայ ժամը 12-ին մեր նաւը Ծարիցինից մեկնում է Սարաթով։ Վոլգայի ափերը այդ կողմերում տաղտկալի են և անհետաքրքիր։ Բուսականութիւնը աղքատ է, երբեմն միայն պատահում են փոքրիկ անտառներ և ծառազարդ գիւղեր, իսկ մեծ մասամբ երկու ափերումը ևս ձգւում են ընդարձակ մերկ տարածութիւններ, յաճախ աւազոտ, ամայի։ Անտանելի տօթ է։ Խցերում (каюта) նոյն իսկ օդ չը կայ շնչելու։ Մտնում եմ սեղանատուն նախաճաշելու։ Այստեղ արդէն գրեթէ բոլոր սեղանները գրաւուած են, քնից նոր միայն վեր կացած ճանապարհորդներով, որոնք զբաղուած են տաւուլեայ թէյով։

Ճանապարհորդների թիւը շատ մեծ է. Նաւում գրեթէ ազատ տեղ չը կայ։ Եւ մարդկային այդ հոծ բազմութեան մէջ տիրում է մի ընդհանուր և խաղաղ տրամադրութիւն։ Սովորական ձևականութիւնները այստեղ իսպառ վերացուած են։ Մարդիկ ազատ կերպով մտերմանում են իրար, խօսում, ծանօթանում։ Երեկոները դահլիճում յաճախ տեղի են ունենում երաժշտութիւն, երգեցողութիւն, պարեր, խաղեր, որոնց մէջ վերջին տեղը չի գրաւում թեթև ֆլիրտը, սիրային արկածները...

Ճանապարհին հանդիպումենք որպէս կարևոր կայարանների, Դուբովկա աւանը և Կամըշին քաղաքը, որոնք արտահանում են հսկայ քանակութեամբ սեխ և ձմերուկ։

Հետևեալ օրը երեկոյեան ժամի 5-ին հասնում ենք Սարաթով։ Սարաթովը իրաւամբ վայելում է Վոլգայի ամենագեղեցիկ և կուլտուրական քաղաքի համբաւը։ Լայն, ուղիղ փողոցները, գեղեցիկ տները, տիրող մաքրութիւնը, Липки կոչուած պարտէզը, խիստ հաճելի տպաւորութիւն են թողնում։ Քաղաքում և շրջակայքում կան մեծ թւով գերմանացի կոլոնիստներ, որոնք բաւականին խոշոր դեր են կատարում տեղական կեանքում։ Մի քանի տարի առաջ Սարաթովում բացուեց նաև համալսարան, որը առայժմ ունի միայն բժշկական ֆակուլտէտ։ Գոյութիւն ունի նաև կոնսերվատորիա, գեղեցիկ օրիգինալ շէնքով։

Սարաթովը յայտնի է նաև իբրև խոշոր առևտրա-արդիւնաբերական կենտրոն։ Արտահանւում են մեծ քանակութեամբ ալիւր, ցորեն, ցեմենտ և այլն։

Սարաթովում կան նաև մօտ 80 հոգի հայեր, գլխաւորապէս պարսկաստանցի մրգավաճառներ։ Առհասարակ Վոլգայի գրեթէ բոլոր քաղաքներում մրգավաճառութեան գործը գտնւում է բացառապէս սալմաստցի հայերի (Հաֆթվանցիների) ձեռքում, որոնք ունենալով Աստրախանում ընդարձակ այգիներ, թարմ մրգեղէնը արտահանում են թէ դէպի Վոլգեան քաղաքները, և թէ դէպի մայրաքաղաքները։

Սարաթովի հայերը բաւականին բարեկեցիկ են, բայց ընդհանուր կապը, փոխադարձ շփումը նրանց մէջ պակասում է։

Կամենալով օգնութեան գալ Կովկասի հայ գաղթականներին Սարաթովի փոքրաթիւ հայերը կազմել էին „հայկական օր", որը մօտ 4000 րուբլի արդիւնք էր տուել։ Նման դէպքերում գործի ամբողջ ծանրութիւնը ընկնում է մի երկու—երեք կիսաինտելիգենտ անհատների վրայ, իսկ հարուստները մնում են անտարբեր։

ՈՒՂԵՒՈՐ

Խմբագիր Հրատարակիչ՝
ՎԱՀԱՆ ՂՈՒԿԱՍԵԱՆ.
Ред.-изд. В. Тукасьянъ.

Дозволено военной цензурой. Астрахань. Типо-литографія Т-во „Печатн. Дѣла" Окуръ, Апресянцъ и Винниковъ.